ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Ի. Դ-ՌՎԻ

Ի՞նչ է ներկայացնում իւր հոգեկան կեանքով ֆրանսիական ժամանակակից ինտելիգենտ երիտասարդութիւնը. ի՞նչով է ապրում, ի՞նչ է մտածում, ի՞նչ բարոյական նպատակներով է առաջնորդւում, որո՞նք են նորա հաւատալիքները, համոզումները, իդէալները։ Որքան մեզ յայտնի է, այս բոլոր հարցերը մեր մամուլը համարեա ամենևին չի շօշափել. թէև նա պակաս ուշադրութիւն չի դարձնում Ֆրանսիայի քաղաքական-հասարակական, գրական և գիտնական երևոյթների վերայ։ Այդ հարցերը չափազանց հետաքրքրական են ինքն ըստ ինքեան, հետաքրքրական են և նորանով, որ սերտ կապւած են ֆրանսիական հասարակապետութեան մօտաւոր ապագայի հետ. հասարակապետութեան, որ քաղաքակիրթ աշխարհի մէջ առաջնակարգ տեղ է բռնում։ Սովորաբար ասում են, — և ասում են միանգամայն իրաւացի, — թէ երիտասարդութեան վերայ են երկրի բոլոր յոյսերը։ Համարձակ կարելի է ասել, թէ ինչպէս որ այսօրւայ երիտասարդութիւնն է, այնպէս կը լինի մեծ մասով էգուցւայ հասարակութիւնը իւր մտաւոր և բարոյական կողմերով։ Այսօր նորա ներկայացուցիչները խմբւած են համալսարանների յարկի տակ, խորասուզւած են դասախօսութիւնների, գրքերի և դասագրքերի մէջ, աշխատում են կաբինէտներում, լաբորատորիաներում, գրադարաննե-

---

1) Русская Мысль 1891 г., № 2.

բում, ապրում են շատ թէ քիչ փակ կեանքով, առանձնացած իրանց ընկերական շրջանների մէջ, բայց վաղը նրանք կը վերկենան դպրոցական նստարանից, դուրս կը գան հասարակական ասպարէզ, իբրև գործնական քաղաքացիներ, կը փոխարինեն այժմեան գործողներին, կը յայտնեն իրանց պահանջները, կեանքի մէջ կը մոցնեն իրանց հայեացքները և առաջնորդող դեր կը խաղան քաղաքականութեան, ընկերական յարաբերութիւնների, գրականութեան, գիտութեան և արուեստների մէջ։ Նոքա կը տարածուեն մտաւոր և գործնական կեանքի բոլոր խաւերի մէջ, ամէն բանի վերայ կը գնեն իրանց հանճարի կնիքը, հասարակաց կարծիքի առաջնորդ կը հանդիսանան, մի որոշ չափով կը կազմեն և կը վճռեն երկրի բաղդը, և այդ բոլորից կը կազմի այն, որին «պատմութիւն» անունն ենք տալիս։ Ահա՛ այս պատճառներով նրանք անկասկած արժանի են մեր ուշադրութեանը։ Արդ, ի՞նչ ուղղութեամբ են կազմուում և ձևակերպուում ֆրանսիական այժմեան ինտելիգենտ երիտասարդութեան գաղափարներն ու զգացումները, ֆրանսիական հասարակութիւնը և ժողովուրդն ի՞նչ պէտք է սպասեն համալսարանական երիտասարդութիւնից։ Մենք կ՚աշխատենք յետագայ տողերով այս կենսական հարցերին ըստ կարի պատասխանել. բայց նախ տեսնենք թէ ի՞նչ են ասում այդ մասին իրանք՝ ֆրանսիական ուսանողները. նրանք այս խնդրի մասին խօսում են, և շատ հետաքրքիր բաներ են ասում։

Անցեալ տարայ յունուարի վերջերին, Պարիզում, փառաւոր Maison des étudiants-ի (*ուսանողական տուն*) *կահաւորուած դահլիճներներից մէկում, որ պատկանում է Պարիզի ուսանողական միութեանը,* (Association des étudiants de Paris) *հինգ հարիւրից աւելի ունկնդիր ուսանողների ներկայութեամբ կայացաւ «Միութեան» հերթական ժողովներից մէկը. այս անգամ դասախօսում էր լեզուաբանական ֆակուլտէտի ուսանող Հէնրիխ Բերանժէն. նիւթն էր «Ինտելիգենտ երիտասարդութիւնը և ֆրանսիական ժամանակակից բոմանը»։ Մեզ համար այս դասախօսութիւնը մի կատարեալ գանձ է, որովհետև նորա մէջ պարզ արտայայտուած է ֆրանսիական ժամանակակից ինտելիգենտ երիտասարդութեան գաւանանքը* (profession de foi), *իսկ ընթերցողների համար, մենք կարծում ենք, սա իսկական գիւտ է։*

II

«Վէպի — կեանքի գեղարուեստական վերարտադրութեան մէջ, — ասաց ի միջի այլոց Բերանժէն իւր նշանաւոր դասախօսութեան սկզբում, — երիտասարդները որոնում են անյագաբար ընդհանրապէս կեանքի, ուրիշների և մասնաւորապէս իրանց սեպհական հոգու գաղտնիքը։ Այս պատճառով մեր նորագոյն վիպասանները, կարծես, ամենից առաջ և առանձին հոգածութեամբ պէտք է աշխատէին նկարագրել այդ երիտասարդութեան համար նորա իսկական պատկերը, որի մէջ ներկայանար և իդէալը և իրականութիւնը, որտեղ երիտասարդութիւնը տեսնէր իւր իսկական պատկերը, և որին աշխատէր նմանել։ Մեծ հեղինակը կարող էր այսպիսով մի գեղեցիկ վաստակ արտադրել և, անշուշտ, բարերար ազդեցութիւն կունենար։ Սակայն ֆրանսիական գեղարուեստական դրականութեան պատկառելի ներկայացուցիչներից ոչ մէկը այդ գոհութեան արժանի պարտականութիւնը չէ կատարել։ Եթէ հռչակաւոր վիպասանները իրանց գրուածքների մէջ երբեմն երբեմն դուրս են բերել նոր սերնդի տիպեր, նոքա այդ արել են հարևանցի կերպով. դրան երկրորդական նշանակութիւն են ուել. նոքա նկարագրել են երիտասարդութեան տիպերը բացառապէս արտաքուստ. նոցանից ո՛չ մէկը երբէ՛ք չէ թափանցել երիտասարդի հոգին, չէ հետաքրքրուել այդ հոգու աստիճանաբար զարգացումով և կազմաւորութեամբ։

Այս երևոյթը բացատրւում է գլխաւորապէս նորանով, որ ո՛չ Գոնկուրը, ո՛չ Զոլան և ո՛չ մի ուրիշը ֆրանսիական նատուրալիստական շկոլայի փայլուն աստղերից ինքն ուսանող չէ եղել բաւի բուն նշանակութեամբ, չէ շնչել համալսարանական շրջանի օդը, չէ ենթարկուել այն տագնապներին, որոնց ենթարկուել են նոր երիտասարդութեան մտքերն ու զգացումները, ուստի և կարողացել է դուրս բերել նորան միմիայն արտաքին կողմից։ Միայն վերջին տարիներս, երբ նատուրալիզմի դէմ սկսեց ռէակցիա և գրականութեան մէջ երևան եկան իդէալիստական ձգտումներ, ասպարէզ եկան երկու երիտասարդ վիպասաններ՝ Պոլ-Բուրժէ և Մորիս-Բարրէս մի շարք գեղարուեստական գրուածքներով, որոնց մէջ ձգտում՝ են նկարագրել և բացատրել ինտելլիգենտ երիտասարդների հոգեկան կեանքը։ Այդ

երկու հեղինակները դուրս են բերում ո՛չ այժմեան նորահաս ինտելլիգենցիայի տիպեր, այլ այն ինտելլիգենցիայի, որին պատկանել է նոցանից իւրաքանչիւրը՝ Բուրժէի շարադրութիւնները 70-ական թուականների ոգով են տոգորուած, իսկ Բարրէսինը՝ ութսունական թուականների կնիքն են կրում։ Այս երկու հեղինակների վերայ, որոնք ներկայացուցիչներն են, Բերանժէն հրաւիրեց իւր ունկնդիրների ուշադրութիւնը։ Նա վերլուծեց յիշեալ հեղինակների արտադրութիւնները, ընտրեց նոցանից բնորոշ գծերը, կազմեց երկու ամբողջական, կենդանի տիպեր, որոնց համեմատեց ժամանակակից ինտելլիգենտ երիտասարդի պատկերի հետ, ժամանակակից երիտասարդի, որ մտնելու վրայ է հասարակական—քաղաքական գործունէութեան ասպարէզը, որ տենդային կերպով որոճում է այս հարցերը, ո՞ւր գնալ, ի՞նչ անել, ինչո՞ւ համար ապրել, և որը խոհուն հայեացք է ձգում ապագայի վրայ։ Տաղանդաւոր դասախօսի այս համեմատութեան արդիւնքը վերին աստիճանի խրատական է։

Ի՞նչպէս է ներկայանում մեզ 70-ական թուականների նոր սերունդը, որից «մարմին ի մարմնոյ» է ինքը Պոլ-Բուրժէն, որ 1872 թուին դեռ ուսանող էր բարձրագոյն գիտութիւնների դպրոցում՝ (Ecole des hautes études)։ Այն ժամանակ նա քսան տարեկան էր և ապրում էր լատինական թաղի երիտասարդութեան կեանքով, այն երիտասարդութեան, որի մտաւոր շրջանի տիպերը փոքր ինչ յետոյ երևան եկան նորա հեղինակութիւնների մէջ։ Զափազանց թշուառ էր այդ սերունդը. նորա կեանքը թունաւորուած էր, նա ընկղմուած էր մեայլ մելամաղձութեան մէջ, նա յուսահատ հեծում էր։ Տխուր, հոգեկան վշտով նայում էր նա իւր և իրան շրջապատող իրականութեան վերայ. չէր էլ կարող ուրիշ կերպ նայել, չէր կարող առողջ հայեացք ունենալ կեանքի վրայ, ստեղծել առողջ աշխարհատեսութիւն։ Պրուսացիները ամբակոծում, ոսնակոխ էին անում և ստորացնում էին հայրենիքը. նոյն ժամանակուայ դեռահաս սերնդի ներկայացուցիչներից հասակաւորները, հրացանը ձեռքերին կանգնած Պարիզի ամրոցներում, կուում էին թշնամու դէմ, պաշտպանելով արիւնաներկ ծննդավայրը։ Նոքա թափում էին իրանց և թշնամու արիւնը, և հոգեպէս ճնշում էին, ականատես լինելով զարհուրելի տեսարանների։ Նոցա աչքի առաջ թափւում էր անմեղ զոհերի արիւնը, ամեն

տեղ սփռելով կորուստ, մահ և աւերմունք։ Աւելի դեռահասները տեսնում էին, թէ ի՞նչպէս պաշարուած քաղաքի վերայ անձրևի նման տեղում էին թշնամու ռմբերը, բերելով իրանց հետ նոյն աւերմունքը. տեսնում էին և քսանում... Միւս կողմից, մինչ արտաքին թշնամու դէմ կռիւը վերջանալու վրայ էր, որ Ֆրանսիացոց համար այնքան ստորացնող, այնքան նախատական ելք ունեցաւ, սկսուեց ներքին կռիւը, արիւնահեղ, եղբայրասպան կռիւ, համայնական կռիւ, զարհուրելի կռիւ «Ֆեդերալիստների» և «վերսալեանների» մէջ... Պարիզը, մեծ Պարիզը, քաղաքակրթութեան լուսաւոր ջահը արիւնով ողողուեց, բոցերի ճարակ եղաւ... համայնքի մէջ ընդհարում... Արիւնահեղ շաբաթը... անգութ ձնշումներ... գազանային վարմունք դէպի յաղթուածները... սարսափելի սպանութիւններ... Եթէ մինչև իսկ այժմ, քսան տարի անցնելուց յետոյ, մենք որ ոչինչ արիւնային կապ չունենք Ֆրանսիայի հետ, այդ աննկարագրելի եղեռնագործութիւնները յիշելիս սարսափում ենք, խորշում ենք մարդկանցից, զարհուրում ենք, ի՞նչ պէտք է զգային իրանք՝ Ֆրանսիացիք, որ ականատես և ժամանակակից էին այս զարհուրելի դէպքերին և իրողութիւններին։ Ի՞նչ պէտք է զգային և կրէին մանաւորապէս մեզ հետաքրքրող ներնդին պատկանող պատանիներն ու երիտասարդները։ Ի՞նչպիսի ճնշող, մեռցնող, մռայլ տպաւորութիւնների պէտք է ենթարկուէր նոցա մատաղ հոգին, որ դեռ նոր էր փթթում, նոր պէտք է կեանքի քաղցրութիւնները ճաշակէր։ Մեր հեղինակը չի կանգնում այս ամենի վրայ, չի դնում այսպիսի հարցեր, այլ բաւականանում է միայն այն ժամանակուայ երիտասարդութեան բնաորոշ գծերը դուրս բերելով։ Առանց նրբազէտ հոգեբան լինելու կարելի է հասկանալ, թէ ի՞նչպէս պէտք է ազդէր այդ ժամանակամիջոցը դեռահաս սերնդի վերայ, ի՞նչպիսի խորը, անջնջելի հետք պէտք է դնէր այդ շրջանի երիտասարդութեան կենդանի, մոտածող ներկայացուցիչների հոգու վրայ։

Այդ երիտասարդութիւնը, ինչպէս առհասարակ լինում է, դեռ անարատ մնացած գործնական կեանքի կեղտերից, ձգտում էր գէպի ճշմարիտը, դէպի լոյս, դէպ ազատութիւն. նորա զգացումներն ու մտքերը մարդասիրական իդէալներով էին տոգորուած. երիտասարդ դլուխները լցուած էին մարդկային հաւասարութեան, եղբայրութեան

վեհ և սուրբ երազներով. նոքա հաւատում էին, թէ աշխարհի վրայ պէտք է թագաւորեն իրաւունքը, արդարութիւնը, խաղաղութիւնն ու սէրը... Իսկ իրականութիւնը ի՞նչ ցոյց տուեց։ Փոխանակ այդ անզուսպ ձգման դէպի լուսաւոր իդէալը, փոխանակ այդ ոսկի երազների, ի՞նչ դուան նոքա իրականութեան մէջ։ Այստեղ գետի պէս հոսում էր մարդկային արիւնը, լրբաբար յաղթանակում էր կոպիտ բռնակալութիւնը, ասուածային և մարդկային բոլոր սուրբ իրաւունքները հայհոյութեան առարկայ էին դարձել, կենդանական անսանձ կրքերը լիուլի բաւականութիւն էին տանում, մարդկանց արտում բուն էր դրել փոխադարձ ատելութեան չար ոգին։ Արդ, հնարա՞ւոր էր դեռ էլի գուրգուրել իրաւունքի, արդարութեան, մարդասիրութեան երազները, երբ շրջապատող կեանքի մէջ անխտիր և անզուսպ կերպով տիրապետում էր միմիայն կոպիտ ֆիզիքական ոյժը, երբ կատաղի բռնակալը մարդկային յարաբերութիւնների միակ ուղղութիւն ուղղն էր հանդիսանում, և յաղթական կերպով ապացուցանում էր բոլոր իդէալիստներին, թէ ոյժը օրէնք է։ Կարելի՞ էր մտածել այլ ևս խաղաղութեան, եղբայրութեան, սիրոյ թագաւորութեան մասին, երբ «եղբայր-մարդիկ» վայրենի կատաղութեամբ յարձակւում էին իրար վրայ, իրար միս էին կրծում վայրի գազանների նման, երբ օդի մէջ հնչում էին թշնամութեան, ատելութեան չարագուշակ ձայները, երբ չորս կողմդ լսւում էին ագեկտուր հառաչանք, անէծք, ատամների կրճտոց։ Եղբայրութիւն, սէր, միութիւն քաղցր խօսքերը կարծես դառն, թունալից դեղնութիւն էին։ Այսպիսի դարհուրելի օրեր հնարաւոր եղան, այն էլ ե՞րբ. 19-րդ դարի երկրորդ կիսին, երբ եռում էր քաղաքակրթութիւնը, երբ ուսումը, դիտութիւնն ու արուեստները անհաւատալի հսկայական քայլերով յառաջադիմում էին։ Եթէ այսպէս է, էլ ի՞նչ միտք ունին այդ գովելի քաղաքակրթութիւնը, ցանկալի յառաջադիմութիւնը, երբ նոքա մարդկանց չեն մարդկայնացնում, երբ նոքա անզօր են մարդու մէջ գազանը սանձելու։ Եւ կը լինի՞ արդեօք երբ և իցէ այս մարդկայնացումը, կը թագաւորէ՞ արդեօք ցանկալի մարդասիրութիւնը, սէրը, մարդկային եղբայրութիւնը։ Սէր... եղբայրութիւն... դատարկ խօսքեր չե՞ն արդեօք։ Տղայական ցնորքներ չե՞ն արդեօք այս բոլոր ձգումները դէպի լուսաւոր իդէալը, որ իրական կեանքի

հետ շփուելիս անհետանում, չքանում են. երիտասարդական ցնորքներիր արդիւնք չէ՞ արդեօք նոյն իսկ այդ իդէալը։ Այո՛, այո՛, — դառնութեամբ կրկնում էին Բուրժէի ժամանակակիցները. ընկճուած զարհուրելի օրերի ահաւոր տեսարանով, — բոլորը դատարկ, անմիտ, անբովանդակ խօսքեր են, բոլորը ցնորք է, երևակայութիւն է, խաբուսիկ երևոյթներ են։ Եւ քանի նոքա կրկնում էին այս մտքերը, այնքան նոցա հայեացքը մթնում էր, ոգևորութեան վառ կրակը, որով երբեմն բորբոքուած էր նրանց հոգին, հանգչում էր, տեղի էր տալիս սառնութեան, գոռոզաբար բարձրացրած գլուխները խոնարհում էին կրծքերի վերայ, անզօր թևերը թուլացած ընկնում էին... Հանրամարդկային լայն, լուսաւոր իդէալի քնքոյշ ծաղիկը ցրտահար էր լինում, խոնարհում, թառամում էր և մեռնում... Դառնանք, սակայն, մեր երիտասարդ հռետորի ճառին։

Բացի վերևն ասածներից, այն ժամանակուայ երիտասարդութեան լայն, իդէալական ձգտումների խորտակելուն և մեռնելուն մեծապէս նպաստեցին և ուրիշ հանգամանքներ։ Կամենալով գտնել իրական կեանքի այդքան փչացած լինելու պատճառները, երիտասարդ ինտելիգենցիայի ներկայացուցիչները ակամայ դարձնում էին իրանց աչքերը Ֆրանսիայի մոտիկ անցեալի, Ֆրանսիական պատմութեան նախընթաց օրայ վերայ, և գտնում էին այնտեղ երկրորդ կայսրութեան նախատինքը, որի սպանիչ, անբարոյականացնող ներգործութեան վերայ մատնացոյց է անում Բերանժէն թռուցիկ կերպով, երկու-երեք խօսքով։ Բայց մենք առանց այդ էլ դիտենք, թէ ի՞նչ էր երկրորդ կայսրութիւնը և ի՞նչ նշանակութիւն ունեցաւ նա դժբաղդ Ֆրանսիայի համար։ Դուրս եկաւ մի ճարպիկ փախստական, դողի պէս ներս սողաց ժողովրդական ինքնավարութեան մէջ, խորտակեց այդ ինքնավարութիւնը, ոտնատակ տալով օրէնքը և անամօթաբար իւր երդումը լուծելով, ձեռքն առաւ երկաթեայ գաւազան, բռնի ուժով ստիպեց շլացած ազգին ճանաչել իրան «փրկիչ և ուէր» և սկսեց կառավարել։ Հայրենիքը իւր «լուսաւորուած և քաղաքակիրթ» դասակարգերով միասին հետևում էր ճարպիկ աւազակի գործողութիւններին և նորանից օրինակ էր առնում իւր գործերի մէջ։ Յաջողութիւնը ի վերուստ ընծայուած շնորհք էր համարւում։ Օրէնք, իրաւունք, պատիւ, խիղճ, մարդկային արժանաւորութիւն,

այդ ամէնը յիմարութիւններ էին, որոնց լուրջ կերպով կարող էին վերաբերուել միմիայն յիմարները, իսկ «խելօք, գործնական, կեանքի վերայ առողջ հայեացք ունեցող» մարդիկ վաղուց պէտք է թողնէին այդ ցանցառութիւնները։ Կեանքի մէջ անհրաժեշտ էր որ և է կերպով յաջողութիւն ունենալ. դորա համար ամէնայն ճանապարհ և միջոց ներելի էր. միջոցների մէջ խտրութիւն դնելը տխմարութիւն էր։ Յաջողութիւնն ամէն ինչ արդարացնում է, ամէն ինչ սրբացնում։ Նորա առաջ ամէն բան խոնարհում է, որովհետև նա է զօրութիւն, իշխանութիւն, երկրային առատ բարիք տուողը, նորանից է բղխում այն ամէնը, ինչ որ հարկաւոր է լիուլի բաւականութեան համար, իսկ բաւականութիւնը խօմ կեանքի միակ նպատակն է. նրանից դուրս ոչինչ չկայ, որին արժէր ձգտել... Ի՞նչ բարձր շահեր, ի՞նչ քաղաքացիական առաքինութիւններ, իդէալներ... Այս և սոցա նման դատարկաբանութիւնները վաղուց պէտք է արխիւ ձգել։ Նոքա ո՛չ մի բարիք չեն տալիս. նրանց հետևողը քաղցած կը մնայ... կեանքից հասկացող և ապրելու եղանակն իմացող մարդու համար իդէալը լաւ կերակուրն է, տաք տեղը, կառավարիչների և իշխանաւորների բարի հայեցողութիւնը, գեղեցիկ Ելենայի դերը կատարող փառահեղ տիկին Շնէյդերի հագուստի կողքի հրապուրիչ բացուածքը... Մնացածը ամբողջապէս յիմարութիւն է... Կեցցէ՛, ուրեմն, յաջողակութիւնը, կեցցէ՛ կեանքի վայելքը։

Այս թեթև, հեշտալի, ստոր կրքերն ու հաճոյքները դրդող բարոյականութիւնը միախառնուած Օֆֆէնբախեան օպերաների գալլ-լայլիկների հետ, որ այն ժամանակուայ կեանքի արտայայտութիւնն էր, Տիւյլրիից տարածւում էր հասարակութեան մէջ և այնտեղ եռանդուն կերպով մշակւում էր, շնորհիւ երկրորդ կայսրութեան. սորա ձեռքում դա մի գեղեցիկ պատուար էր «վնասակար» գաղափարների դէմ, և ամէնայուսալի գրաւական՝ ներքին խաղաղութիւնը ու հանդարտութիւնը պահպանելու համար։ Այս կողմից նորա աշխատութիւնները պսակւում էին կատարեալ յաջողութեամբ. կենդանական պահանջներն առաջին տեղն էին բռնում, կատարւում էին ամէն տեսակ խողութիւններ։ Անառակ վարք ու բարքը չափազանց յարմար էր գալիս ֆրանսիական հասարակութեան կրթուած դասակարգերի ճաշակին, նոքա անյագաբար վազում էին հարստութեան,

վայելքների յետևից։ Փողը, զարմութիւնը պաշտում էին, փողի համար հոգիներն էին ծախում։ Ամենալիրբը նոցանից ոգեկան զարմանալի արագութեամբ քաղաքացու պատուի էր հասնում, ձայն էր ունենում երեսփոխանական ժողովում, բարձրագոյն ատենում, դատարաններում, դատախազների խորհրդում. բարձրանում էր պրոֆեսորական ամբիոն, գործում էր հրապարակախօսութեան և գրականութեան մէջ։ Քաղաքակիրթ Ֆրանսիան կամաց-կամաց սկսեց նմանել մի ահագին հասարակաց տան, որտեղ, առանց խղճահարութեան, օրը ցերեկով, ամբողջ Եւրոպայի աչքի առջև, կատարւում էին ամեն տեսակ կեղտոտութիւններ և որտեղ պատիւ, խիղճ, համոզմունք, բոլորը օդն էին ցնդում։ Եւ այս ամենը շարունակւեց, համարեա՛, ամբողջ քսան տարի, որի միջոցին ապականութիւնը տարածւեց Ֆրանսիայում, ինչպէս իւղի կաթիլը ծծող թղթի վրայ։

Ինքնըստինքեան հասկանալի է, որ այն ամենը, ինչ որ ազնիւ էր, մաքուր էր, բարոյապէս կենդանի էր, պէտք է մեռնէր խեղդող, ապականւած մթնոլորդի մէջ, կամայ ակամայ պէտք է տեղի տար ինքնաբաւական խողութեանը։ Բնաւորութիւնները մնրանում էին, համոզումները ծախւում էին շողշողուն ոսկիներով, տաղանդները փչանում էին։ Կեանքի և գործունէութեան բոլոր խաւերի մէջ տիրապետեց ստոր միջակութիւնը, որ ամեն բանի վրայ դրեց իւր սեփական կնիքը. ամեն ինչ ստորացաւ, կեղտոտւեց, հոգեկան կեանքի աղբիւրներն սկսեցին ցամաքել, ամենայն ստեղծագործութիւն, բացի արիկայական օպերէտներից, մեռաւ։ Անբարոյական հասարակութեան մէջ միանգամայն ոպառւեցին կենդանի ոյժերը, անառակութեանը յաջորդեց կատարեալ սնանկութիւն, որի հետևանքն եղաւ 70 թւականի կատաստրոֆը։

Բերանժէն չընկարագրեց իւր ունկնդիրների առաջ երկրորդ կայսրութեան օրերում Ֆրանսիական հասարակային կեանքի այս այլանդակ պատկերը։ Նա միայն հարևանցի ակնարկ ձգեց այդ կայսրութեան վրայ, համարելով նրան ամբողջապէս Ֆրանսիան անբարոյականացնող և 70-ական թւականների ինտելլիգենտ երիտասարդութեան ոգուն անկմանը նպաստող մի գործօն (факторъ)։ Բերանժէի հասակակիցներին և ընկերներին պէտք է զարմացնէր աւելի այն ընդհանուր տեսարանը (фонъ) որի վրայ նկարւում էր վերոյիշեալ պատկերը – այն հա-

սարակութիւնը, որն օժանդակում էր աւազակի յաջողութեանը, որը ծափահարում էր նրան, խոնարհում, տարածւում էր Ֆրանսիայի այդ «չար ոգու» ոտքերի տակ։ Այդ հասարակութիւնն ընդունակ էր միայնդամայն մոռանալ մարդկային արժանաւորութիւնը, վերջին աստիճանի ստորանալ, փչանալ, բարոյապէս ընկնել։ Նա պատրաստ էր յարձակւել իւր առջևը դրած լափի վրայ, և մեծ բաւականութեամբ խրւում էր իւր համար պատրաստած ցեխի մէջ, և, որ ամենից սարսափելին է, տրորւելով այդ ցեխի մէջ, իրան երջանիկ էր զգում և ուրախ, ինքնաբաւական մրթմրթոցով ականջ էր տանում։ Եւ այս անողներն էին երկրի ծաղիկները՝ նորա բարձրադոյն «քաղաքակիրթ, լուսաւորուած և յառաջադէմ» ներկայացուցիչները։ Երբ մարդ երևակայում է, թէ ի՞նչ էր այդ հասարակութիւնը, որ մարմնացած ապականութիւն էր, ակամայ սարսուռ է զգում, փշաքաղւում է... կարելի էր այս բոլորը պատմական անցեալ համարել, մոռացութեան տալ։ Բայց ցաւն այն է, որ չի կարելի։ Զէ՞ որ հասարակութիւնն այդպէս էր ոչ թէ հարիւր տարի առաջ, այլ երէկ։ Նա չէր կարող մի դիշերուայ մէջ ամբողջովին փոխւել. այդպիսի կարճ միջոցում չէին կարող խոզի ցուցկները մարդկային կերպարանք դառնալ։ Եւ թէ արդարև նոքա չը փոխւեցին, դորան պերճախօս վկաներ են 70-ական թուականների բազմաթիւ իրական փաստերը։ Չը նայելով որ արտաքուստ շատ բան փոխւեց, չը նայելով որ երկրորդ կայսրութեանը յաջորդեց երրորդ հանրապետութիւնը, իրական կեանքը մնաց իսկապէս առաջուանը, նրա շարունակութիւնը։ Եւ այսպիսի կեանքի մէջ, այսպիսի հասարակութեան մէջ, որին անաչառ պատմութիւնն անշուշտ իւր արժանի տեղը կտայ, վիճակուած էր մեզ հետաքրքրող սերնդի ինտելիգենտ երիտասարդութեանը ապրել և գործել... Ի՞նչպիսի ճնշող, վհատեցնող, կաշկանդող ազդեցութիւն պէտք է անէր այդ կեանքը նոր սերնդի հոգու վրայ։

Բայց եթէ այդ ժամանակւայ երիտասարդութիւնը շրջապատող կեանքի մէջ իւր իդէալական ձգտումներին նեցուկ չէր գտնում, գուցէ նա այդ կարող էր գտնել վերացական դաղափարի, փիլիսոփայութեան, դիտութիւնը քաջալերող ոյժի մէջ։ Դժբաղդաբար չէր կարող, լսում ենք Ինրանժէից։ Թէ՛ փիլիսոփայութեան, թէ՛ դիտութեան մէջ վաղուց արդէն կատարւել էր արմատական փոփոխութիւն,

որի հետևանքները, մեր հռետորի ասելով, ամենևին չէին նպաստում մոռածող մարդոց ոգին բարձրացնելու։

«Իրանց ծագումով այնքան տարբեր և իրանց նպատակներով այնքան հակառակ Կանտի կրիտիցիզմը և անգլո-ֆրանսիական պոզիտիվիզմը միացրին իրանց ոյժերը, որպէսզի հին մետաֆիզիկայի բացարձակ դրութիւնները խորտակեն և այդ անմահ համարուած բացարձակ դրութիւնների տեղը դնեն ընդհանուր յարաբերականութեան վարդապետութիւնը։ Ֆրանսիական յեղափոխութիւնն ուրիշ ոչինչ էր, եթէ ոչ բացարձակ իրաւունքի հրատարակութիւնը երկրի վրայ. նա իբրև անհերքելի և սրբազան յայտնեց այն սկզբունքը, թէ բոլոր մարդիկ եղբայր են, թէ նոքա բոլորը ազատ են և հաւասար։ Սա բացարձակ մետաֆիզիքական դրութիւն էր, և ա՛յ՝ Կանտի վարդապետութիւնը, միացած Կոնտինի հետ, հերքեց այս դրութիւնը։ Նոյն իսկ գիտութիւնը, որ հետզհետէ տիրում էր մտքերին, հրատարակեց, թէ աշխարհում գոյութիւն ունին միմիայն օրէնքներ և ամբողջ տիեզերքում տիրապետում է համատարած պատճառականութեան երկաթեայ շղթան, թէ հոգեկան և թէ նիւթական աշխարհները կառավարւում են նորանով և միայն նորանով։ Այս երկու սկզբունքները,—ընդհանուր յարաբերականութիւն և պատճառականութիւն,—զօրեղ կերպով խորտակեցին ազատութեան, բացարձակ իրաւունքի, ընդհանուր եղբայրութեան գաղափարները, որոնք ոգևորում էին անցեալ դարի վերջում ապրող մարդկանց, որոնցով ներշնչուած նոքա հերոսութեան էին հասնում, ձգտում էին ամբողջ աշխարհը յեղաշրջել։

Ինչպէս որ տաճարի սիւները խորտակելով իրանց հետ խորտակում, փշրում ու տապալում են կամարները, կաթոդիկէն, աստուածային սուրբ խորանը և սրբազան պատկերները, այնպէս էլ ազատութեան և իրաւունքի բացարձակ սկզբունքների հետ միասին խորտակեցին բանականութեան արդիւնքը՝ ջերմ հաւատը, և առհասարակ առաջւայ բարոյական գաղափարների ամբողջ շէնքը։ Բացի անհրաժեշտութեան երկաթեայ օրէնքից, որով կառավարւում է ամբողջ տիեզերքը, և որը ամենևին չի ենթարկւում մարդկանց գործողութիւններին, չը կայ ոչինչ անխախտ, ոչինչ բացարձակապէս ճշմարիտ. չը կա՛յ ոչինչ, որի վերայ, իբրև հաստատուն նեցուկի

վրայ, յենուի մարդուս միտքը։ Ճշմարտութիւնն ու ստութիւնը, առաքինութիւնն ու մեղքը, բարին ու չարը, բոլորը յարաբերական բաներ են երեւում, բոլորը դառնում են մեզ համար ընդհանուր տիեզերական ույժերի բնական անխուսափելի հետեւանք, ույժերի, որոնք չեն ենթարկւում մարդու կամքին։ Ամբողջ բնութիւնը իւր փոփոխութիւններով երեւում է պատճառների և հետեւանքների անընդհատ ճակատագրական շղթայ, և ողորմելի, անզօր մարդը չի կարող իւր կամքի համաձայն փոխել կամ դասաւորել այդ երկաթեայ շղթայի մի օղակն անգամ։ Աշխարհի մէջ ամեն բան կը կատարուի այնպէս, ինչպէս պահանջում է ընդհանուր պատճառականութեան անողոք, բնական օրէնքը, և մարդը, որ անմիջապէս գտնւում է այդ օրէնքի իշխանութեան տակ, իրերի ընթացքի մէջ փոփոխութիւն մտցնել չի կարող։ Այսպէս էր, Բերանժէի ասելով, մտքերը նւաճող պատճառականութեան փիլիսոփայութիւնը, որ, աւելացնում ենք մեր կողմից, հոգեբանական տեսակէտից սխալ էին հասկանում և բացատրում։ Այս փիլիսոփայութիւնը իւր կնիքը դրեց և հասարակական գիտութեան, և՛ գեղարւեստական գրականութեան վերայ։ Նա առաջին անգամ երեւան եկաւ Տէնի, յետոյ և Ռընանի շարադրութիւնների մէջ. այդ ոգով տոգորւեցին և տիրապետող նատուրալիստական շկօլայի վիպագիրները—Ֆլոբէր, Գոնկուր եղբայրները և Զոլան իւր աշակերտներով և հետեւողներով։ Այդ փիլիսոփայութիւնը, այդ պատմութիւնը, այդ գրականութիւնը մահացնող սառնութիւն փչեցին երիտասարդութեան վերայ։ Դոցա շնորհիւ երիտասարդների բարոյական ույժը թուլացաւ, կաշկանդւեցաւ։

Գաղափարների, պատմութեան և կեանքի այս զանազան ազդեցութիւնների հետեւանքը չափազանց անմխիթար եղաւ։ Երիտասարդութիւնը հոգեպէս ընկճւեց, ընկաւ ծայրահեղ հիասթափման մէջ, ոչ մի բանի չէր հաւատում։ Վերեւից, գաղափարական աշխարհից, սառն, աղօտ լոյս էր տարածւում նորա վրայ, շրջապատող իրականութիւնը նորա մէջ զարթեցնում էր զզւանքի զգացում։ Կեանքը երեւում էր անխորհուրդ, աննպատակ, ապականւած։ Չկար այս աշխարհում ոչինչ, որին արժէնար գէթ փոքր ի շատէ լրջօրէն վերաբերւել, որի վերայ արժէնար օգտաւէտ կերպով և հաճութեամբ գործ դնել հոգեկան ույժերը։ Սորանից առաջ եկաւ յոռետեսութիւն, ան-

տարբերութիւն և, իբրև այս բոլորի անմիջական հետևանք, նեղ եսականութիւն, սեպհական «եսը» պաշտել։ Արդարև, եթէ շրջապատող կեանքը այնպէս է կազմակերպուած, որ նորա մէջ ոչինչ մասնակցութիւն չարժէ ունենալ, եթէ այդ կեանքի մէջ ոչինչ չը կայ սիրելու, ոչնչով չի կարելի յափշտակուել, ոչնչի առաջ չի կարելի խոնարհուել, ուրեմն մտածող մարդուն ուրիշ ոչինչ չի մնում անել, բայց եթէ երես դարձնել այդ կեանքից, քաշուել, փակուել իւր անձնական ներքին աշխարհի մէջ, միմիայն իրան համար ապրել, և անտարբեր աչքով նայել ողորմելի տեսարանների վրայ, որ ներկայացնում են ողորմելի դերասանները կեանքի ողորմելի բեմի վրայ։ Այս եզրակացութեանն եկան 70-ական թուականների երիտասարդութեան նոյն իսկ լաւագոյն ներկայացուցիչները, որոնցից է անկասկած և ինքը՝ Պօլ-Բուրժէն. նոքա բոլորը դարձան յուսաբեկ պեսսիմիստներ և իրապաշտներ։ Բայց այսպէս իրանց շրջապատող կեանքից խոյս տալով, աշխարհից կորուելով և ճգնաւորի նման խցերում փակուելով նոքա չէին կարող իրանց բաղդաւոր զգալ։ Մի կողմից նոքա ողբում էին լայն, հանրամարդկային իդէալների կորուստը, միւս կողմից, հոգեպէս կորուելով շրջապատող կեանքից, նոքա հեռուհեռէ թառամում էին։ Մարդը ընկերական արարած է. հէնց որ նա խզեց իւր սերտ, կենդանի կապերը հասարակային մարմնից, որից շարունակ ծծում է կեանքի հիւթը, անպատճառ կը ցամաքի, կը թառամի, կը մեռնի... Թշուա՛ռ էգոիստներ. նոքա պարզ տեսնում էին իրանց տկարութիւնը, տկար էին գործով, տկար էին մտքով և զգացումներով, և դրա գիտակցութիւնը նրանց տանջում էր, հանգիստ չէր տալիս։ Այս հանգամանքը գեղեցիկ կերպով երևում է Բուրժէի վէպերի երիտասարդ հերոսների վրայ. նոքա, իհարկէ, բարոյապէս ազնիւ երևոյթներին ներկայացնում, և կարո՞ղ էր արդեօք ուրիշ կերպ լինել։ Նոքա շատ լաւ էին զգում այդ, ուստի և ամենևին չէին մտածում իրանցով հրճուել. ընդհակառակը, նոքա լաւ էին հասկանում իրանց բարոյական կեանքի անբնական լինելը, հասկանում էին, և քիչ չէին տանջւում։ Այդ տանջուելը պարզ ցոյց է տալիս, որ նրանց մէջ կար ազնիւ, մարդկային բնաւորութիւն։ «Այս պատճառով,—բացագանչեց Բերանժէն,—չը նայելով այս բոլորին, մենք սիրում ենք նրանց, համարելով նրանց մեր եղբայրները, որոնք

տանջւում էին, որոնց կեանքը հարւածւում՝ էր և որոնք, սակայն, հնար չունէին իրանց վէրքերը բժշկելու... Մենք նրանց սիրում ենք և ներում՝ նրանց մեղքերը, որովհետև նոքա զարհուրելի անցեալի ժառանգներն էին, որովհետև նոցա մտքովն իսկ չէր անցնում հպարտանալ իրանց բարոյական հիւանդութիւնով, կամ՝ նրանից ո՛ր և է օգուտ սպասելու։

Ահա՛ այսպիսի գոյներով է նկարում՝ և այսպէս է գնահատում մեր ժամանակակից երիտասարդութեան ներկայացուցիչը, հաւանօրէն լաւագոյններից մէկը, — 70-ական թւականների նոր սերունդը։ Տեսնենք ինչ է ասում՝ նա իւր եղբայրակիցների՝ 80-ական թւականների սերնդի մասին։

(Կը շարունակւի)